**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**
**ՎԱՐՉԱՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐ**

0010 ք. Երևան, Կառավարական տուն 1

**№ 02/05.5/5902-2026**

**ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐ-ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ**
**ԴԱՎԻԹ ԱՌԱՔԵԼՅԱՆԻՆ**

Հարգելի՛ պարոն Առաքելյան,

Ձեզ ենք ներկայացնում Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովում առաջին ընթերցմամբ ընդունված «Մաքսային կարգավորման մասին» օրենքում լրացում կատարելու մասին Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի փաթեթի (Կ-1234-29.12.2025-ՏՀ-011/1) վերաբերյալ Հայաստանի Հանրապետության կառավարության առաջարկությունները, լրամշակված նախագիծը, ամփոփաթերթը, ինչպես նաև նախագծում կատարված փոփոխությունների վերաբերյալ տեղեկանքը՝ գլխադասային հանձնաժողովում քննարկելու համար:

1. 1-ին հոդվածում առաջարկում ենք՝

1) «(այսուհետ՝ Օրենք)» ձևակերպումը հանել՝ հիմք ընդունելով այն հանգամանքը, որ նախագծում «Մաքսային կարգավորման մասին» օրենքին այլևս հղում չի կատարվում,

2) 1-ին հոդվածով՝ «Մաքսային կարգավորման մասին» օրենքում լրացվող նոր 69. 1-ին հոդվածի 1-ին մասում առաջարկում ենք հստակեցնել, թէ ում կողմից է հաստատվելու հերթերի կառավարման համակարգը:

Վերոգրյալը հաշվի առնելով՝ 1-ին հոդվածով «Մաքսային կարգավորման մասին» օրենքում լրացվող նոր 69. 1-ին հոդվածի 1-ին մասում «Կոմիտեի» բառից հետո առաջարկում ենք լրացնել «կողմից հաստատված» բառերը:

2. Նախագծի 2-րդ և 3-րդ հոդվածների վերնագրերը առաջարկում ենք հանել՝ պահպանելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 14-րդ հոդվածի պահանջները:

Հարգանքով՝ **ԱՐԱՅԻԿ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ**